
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ
(1908–1914 թթ.)*

ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ «Երիտասարդ Հայաստան», Ստեփան Սապահ-Գյուլյան,
արևմտահայություն, Թուրքիա, բռնապետություն, ազատազրական պայ-
քար, սոցիալիզմ, հեղափոխական շարժում:

Նախարան

XIX դարավերջին և XX դարասկզբին հայ քաղաքական կյանքի գլխա-
վոր խնդիրն արևմտահայերի ազատազրումն էր թուրքական տիրապե-
տությունից, որին ուղղված էին հայ ազգային-քաղաքական ուժերի հիմ-
նական ջանքերը:

1908 թ. երիտթուրքական Հեղաշրջումից հետո առաջացած քաղա-
քական իրազրությունը նոր խնդիրներ առաջարկեց նաև հայ ազգային-
քաղաքական կյանքի ղեկավարությանը ստանձնած ուժերին: Ստեղծված
իրավիճակում ազատազրական պայքարի նախորդ շրջանի վերլուծութ-
յունն ու վերաիմաստավորումը, ինչպես նաև պայքարի նոր ուղիների և
միջոցների փնտառությունը իր արտահայտությունն էր գտել ու լայնորեն
քննարկվում էր ժամանակի հայ քաղաքական մամուլի էջերում: 1908–
1914 թթ. ընթացքում հայ ժողովրդի նկատմամբ թուրքական կառավա-
րության վարած քաղաքականության, Հայկական Հարցին, սոցիալիզմի
գաղափարախոսության ու քարոզչության, միջազգային սոցիալ-դեմոկ-
րատական շարժման, ինչպես նաև հայ ազգային կյանքին առնչվող բազ-
մաբնույթ հարցերն արձարծում էր նաև Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան
կուսակցության (ՄԴՀԿ) ԱՄՆ-ի օրգան «Երիտասարդ Հայաստան» պար-
բռականը:

Պարբերականի ընդհանուր բնութագիրը

Որպես շաբաթաթերթ պարբռականի հրատարակությունը սկսվել է
1903 թ. Բոստոնում, ապա՝ Նյու Յորքում (1906–1912 թթ.), Պրովիդեն-
սում (1913, 1916–1917 թթ.), Փարիզում (1914 թ.), Զիկագոյում (1917–
1923 թթ.), Բոստոնում (1923–1927 թթ.), այնուհետև՝ կրկին Նյու Յոր-
քում՝ մինչև 1973 թ.:

Պարբերականի գլխավոր խմբագիրը հնչակյան կուսակցության հայտ-
նի գործիչ, տեսաբան Ստեփան Սապահ-Գյուլյանն էր: Լինելով կու-
սակցության ԱՄՆ-ի շրջանի օրդանը՝ բնականաբար, պարբերականի նպա-

* Ներկայացվել է 11. IX. 2020 թ., գրախոսվել է 17. IX. 2020 թ., ընդունվել
է տպագրության 29. I. 2021 թ.:

տակների շարքում առաջնային տեղ էր գրավում հնչակյան կուսակցության գաղափարների քարոզչությունը։ Թեպետ Սապահ-Գյուլյանը համոզված սոցիալիստ էր, և այս հանգամանքը լուրջ ազդեցություն ուներ պարբերականի ընդհանուր բովանդակության վրա, սակայն դրա հետ «Երիտասարդ Հայաստանի» 1903–1908 թթ. գործունեությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ պարբերականի գլխավոր մտահոգությունն օսմանյան տիրապետությունից Արևմտյան Հայաստանի ազատագրությունն էր, որը շարունակում էր մնալ հայ ազգային-քաղաքական կյանքի գլխավոր խնդիրը։

Պարբերականն ուներ «Քաղաքական», «Գրական», «Կէնսագրական», «Նամականի», «Թղթակցություններ», «Ամերիկահայ կեանք» բաժինները։ «Քաղաքական» բաժնում լուսաբանվում են միջազգային ընթացիկ իրադարձությունները, «Ամերիկահայ կեանք» բաժնում ներկայացված են բարեգործական հանգանակությունների, հնչակյան հրապարակային ժողովների, ամերիկահայության ազգային, կրթական ու կրոնական խնդիրները։ Պարբերականի 1908 թ. համարների «Գրական» բաժնում տպագրվում է Վ. Վասակունու «Սարիրէ» վեպը, որում ներկայացված է տվյալ ժամանակաշրջանի թուրք իրականությունը, Կ. Պոլսի քաղաքային կյանքը, մարդկային փոխհարաբերությունները։

«Երիտասարդ Հայաստանի»՝ 1908 թ. բազմաթիվ համարներում կան հոդվածներ, հաղորդումներ հնչակյան կուսակցության 20-ամյակի առթիվ կազմակերպված ժողովների, միտինգների, հանդեսների վերաբերյալ։

Պարբերականի «Կէնսագրական» բաժնում առանձին ուշադրություն է դարձված երիտասարդ հնչակյանների գործունեությանը¹։ «Երիտասարդ Հայաստանին» թղթակցում էին հնչակյան կուսակցության մի շարք հայտնի գործիչներ, տեսաբաններ, որոնց շարքում էին՝ Տաշիրը (Սիմոն Հովյան), Գրիգոր Եղիկյանը, Սոկրատ խան Գեղոֆյանցը, Զակոր Արծրունին, Վարագուստը (Գրիգոր Անպարճյան), Արտեմիոսը (Հարություն Գասպարյան), Շ. Շահումյանը և ուրիշներ։ Շաբաթաթերթի՝ 1908 թ. հուլիսի 8-ի համարում Տաշիրը հանդես է գալիս «Նոր տարեշրջան» խմբագրական հոդվածով, ուր ձեւակերպում է ստեղծված պայմաններում «յեղափոխական-քաղաքական մամուլի գերը», որը, ըստ նրա, ազգային-ազատագրական ու սոցիալիստական գաղափարների սերմանումն է ժողովրդական մասսաների մեջ։ Նշված ուղղություններն էլ կազմում են Տաշիրի հոդվածների առանցքը։ Նա հանդես է գալիս նաև եվրոպական մեծ պետությունների վարած քաղաքականության վերլուծություններով²։ «Ուխտագրուժ բռնակալ» խմբագրական հոդվածում Տաշիրը քննադատում է Պարսկաստանի շահին, որը ուսական ցարի պաշտպանության տակ հանդես է գալիս երկրի իրական առաջադիմության դեմ³։ Դատապարտում է Ռուսաստանի Յըրդ պետական դումայի հարմարվողական, հաշտվողական գործելակերպ՝ այն համարե-

¹ «Երիտասարդ Հայաստան» (Նիւ-Եօրք), 08. I. 1908, 05. II. 1908, 18. III. 1908, 13. V. 1908:

² «Երիտասարդ Հայաստան», 24. VII. 1908:

³ «Երիտասարդ Հայաստան», 22. VII. 1908:

լով պարտվողական ու հետադիմական⁴: Տաշիրի ուշադրության կենտրոնում էր նաև եվրոպական սոցիալ-դեմոկրատների գործունեությունը⁵:

«Երիտասարդ Հայաստանը» լայն տեղ է հատկացրել սոցիալիզմի քարոզչությանը: Այս հարցերի լուսաբանմամբ աչքի է ընկնում հատկապես Սովորատ խան Գելոփյանցը: Նրա գրչին է պատկանում «Կապիտալիզմի չարեքները» հոդվածաշարը⁶: Գելոփյանցը ներկայացրել է ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի գործադրությային շարժումները: Հեղինակն անդրադարձել է սոցիալիզմի գաղափարախոսության⁷, ինչպես նաև՝ եկեղեցու և սոցիալիզմի առնչության հարցերին: «Բաց ու գոյց», «Եկեղեցի և ընկերվարութիւն» հոդվածներում Գելոփյանցը գաղափարական բանավեճի մեջ է մտնում դաշնակցության հետ⁸: «Սոցիալիզմը և Թուրքիան» խմբագրական հոդվածում նա չափազանցության մեջ է ընկնում՝ գրելով, որ կապիտալիզմն արդեն մտել է այդ երկիրն ու այնտեղ դասակարգային պայքար գոյություն ունի, հետևաբար, պարարտ հող կա նաև սոցիալիստական գործունեության համար⁹: Ընդգծենք՝ այս տեսակետն էր պաշտպանում նաև գլխավոր խմբագիր Սապահ-Գյուլյանը, ով կապիտալիզմի գարգացման առումով թուրքիան համեմատում է Ռուսաստանի և այլ երկրների հետ¹⁰:

Հնչակյան հայտնի գործիչ Հակոբ Արծրունու հոդվածներում և թղթակցություններում առաջնային են ազգային-քաղաքական խնդիրները: Այս հարցերի շուրջ նա «Արձագանքներ» հոդվածաշարով բանավեճ է ծավալում «Երկրի ձայն», «Վտակ» պարբերականների հետ: Ընդհանրապես, «Երիտասարդ Հայաստանի» 1908 թ. համարները լի են «Մշակ», «Արձագանք», «Նոր դար», «Վտակ» պարբերականների հետ գաղափարական բանավեճներով: Արծրունին աչքի է ընկնում վաղամենիկ երիտասարդ հնչակյանների գործունեությանը նվիրված իր հաղորդումներով¹¹: Հայ քաղաքական կյանքի վերլուծություններին նվիրված իր հոդվածներում ընդգծվում է Արծրունու հակադաշնակցական դիրքորոշումը¹²:

Հայկական հարցին, ազատագրական պայքարի և հայ ազգային խնդիրներին նվիրված հոդվածներով պարբերականում հանդես են գալիս Շ. Շահումյանը, Բ. Վարազդատը, Արտեմիոսը:

«Երիտասարդ Հայաստանի» ակտիվ թղթակիցներից Գ. Եղիկյանն այս հարցերից զատ՝ իր «Մահմեդական աշխարհը» հոդվածաշարում արծարծել է իսլամի գաղափարների ազգեցության, մուսուլմանների առանձնահատկությունների, կենցաղի, ոչ մուսուլմանների հետ ունեցած փոխհարա-

⁴ «Երիտասարդ Հայաստան», 12. VIII. 1908:

⁵ «Երիտասարդ Հայաստան», 15. VII. 1908:

⁶ «Երիտասարդ Հայաստան», 08. XII. 1910, 14. XII. 1910, 21. XII. 1910, 28. XII. 1910:

⁷ «Երիտասարդ Հայաստան», 05. VII. 1911, 12. VII. 1911:

⁸ «Երիտասարդ Հայաստան», 07. IX. 1910, 14. IX. 1910:

⁹ «Երիտասարդ Հայաստան», 31. VIII. 1910:

¹⁰ «Հնչակ» (Փարիզ), 1907, № 9–10 (սեպտեմբեր–հեկտեմբեր), էջ 122:

¹¹ «Երիտասարդ Հայաստան», 08. I. 1908, 05. II. 1908, 18. III. 1908:

¹² «Երիտասարդ Հայաստան», 06. V. 1908, 13. V. 1908:

բերությունների հարցերը¹³: Լուսաբանել է նաև Թուրքիայի պատմությանն ու երիտթուրքական շարժմանն առնչվող հարցեր¹⁴:

Աղքային-քաղաքական խնդիրները պարբերականում

«Երիտասարդ Հայաստանի» 1908 թ. հունվարի 1-ի համարում «Անցնող տարին» խմբագրական հոդվածում՝ հանրագումարի բերելով 1907 թ. հայ հասարակական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձությունները, Շ. Շահումյանը գրում է, որ նոր տարին յուրատեսակ ինքնահաշվետվության օր է, երբ մարդիկ պարտավոր են իրենց հարց տալ, թե ի՞նչ են արել անցնող տարում, որպեսզի օգտակար լինեին իրենց ազգին: Առաջնորդող հոդվածն ուշադրություն է հրավիրում դեպի «իրական դժոխքը - դեպի Տաճկահայատան, որտեղից ողբի ձայները չեն կտրւում երբեք, այլ ընդհակառակ՝ տիրող բէմիմի վատիմար հալածանքն առաւել ճգմում է իրաւագուրկ հայ ժողովրդին»: Հոդվածագիրն առաջ է քաշում այն գաղափարը, որ հայ ժողովրդի՝ դեպի ազատություն տանող միակ ճանապարհը, միակ միջոցը նրա հավաքական ըմբռատությունն ու վճռական պայքարն է, և այդ ճանապարհին նրան չեն օգնելու «ոչ արտասահման պաղատանքները, ոչ գետնատարած աղօմքի մրմունջները», քանի որ դրանք երբեկցէ չեն օգնել. «Վրեմինդիր բազուկ, հատու սուսեր, սեղմ շարքեր ... ահա միակ իսկական ճանապարհը դեպի ազատութիւն»: Այս համատեքստում հոդվածագիրը «Մակեղոնիո երկունքը» խմբագրականում ողջունում է մակեղոնացիների և մյուս ժողովուրդների ազատագրական պայքարն օսմանյան բռնապետության դեմ¹⁵: Շահումյանը միիթարական չի համարում նաև արևելահայ իրականությունը՝ գրելով, որ ոռոսական ինքնակալությունը «բիւրօկրաստիան հալածանքի մտրակը ձեռքն առած անխնայ հարուածում է բոլոր նրանց, որոնք յեղափոխական են ճանաչւում»¹⁶: Ընդգծում է այն հանգամանքը, որ «այս տեսահիտից հալածանքի մրուրը քամողը, որպէս մարտնչող տարր, ներկայանում է հայութիւնը»¹⁷: Հայության հետ կապված մյուս նշանավոր իրադարձությունը «Պարսկաստանի յեղափոխական շարժումն է և ձեռք բերած անկատար սահմանադրութիւնը»¹⁸: Հոդվածագիրը գտնում էր, որ պարսկահպատակ հայությունը պետք է «համընթաց լինի» այդ շարժմանը, որպեսզի կարողանան օգտվել նաև ձեռք բերվելիք արտոնություններից: Կարևորվում է հնչակյանների մասնակցությունը, որոնց վրա «պարտականութիւն է ծանրանում աւելի մեծ չափով մասնակցութիւն ունենալու այդ դեմօկրատիկ շարժման մեջ»¹⁹: Հայ քաղաքական կյանքի մյուս կարևոր երևոյթը, որի վրա ուշադրություն է սևեռում խմբագրականը, «համերաշխութեան» գաղափարն էր՝ հնչակյան կուսակցության կենտրոնն առա-

¹³ «Երիտասարդ Հայաստան», 27. VII. 1910, 31. VIII. 1910, 07. IX. 1910, 14. IX. 1910, 21. IX. 1910:

¹⁴ «Երիտասարդ Հայաստան», 25. I. 1911:

¹⁵ «Երիտասարդ Հայաստան», 13. V. 1908:

¹⁶ «Երիտասարդ Հայաստան», 01. I. 1908:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում:

ջաղբեց ազգային կուսակցություններին: Հոդվածում քննադատության են ենթարկվում «Հայ ազգային կոնգրեսի» գաղափարը վաղաժամ համարող ուժերը (խոսքը վերաբերում է ՀՅԴ-ին): Առաջ քաշելով և պաշտպանելով «Ոյժը միւթեան մէջ է» կարգախոսը՝ խմբագրականը հույս է հայտնում, որ դա կարող է դառնալ հայության «նոր տարու նուերը»²⁰: Հոդվածում հարգանքի տուրք է մատուցվում հանգուցյալ կաթողիկոս Խրիմյան Հայրիկին և հույս հայտնվում, որ հայոց նոր Հայրապետն իր նախորդի օրինակով «տոգորւած լինէր զուտ ժողովրդական գաղափարներով»²¹:

«Երիտասարդ Հայաստանն» անդրադառնում է 1907 թ. Եղիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում տեղի ունեցած հնչակյան հրապարակային ժողովում Մուրատի (Հ. Պոյաճյան) արտասանած ճառին, ուր հայտնի գործիչն անդրադարձել է հայ ազատագրական պայքարի անցած շրջանի անհաջողությունների պատճառներին: Մուրատը նշում է, որ «բռնութեան դէմ գործնականապէս կուղոներուն թիւը շատ սահմանափակ եղաւ. և հայ ժողովրդին մեծ մասը որք հոգով թոյլ գտնւեցան, խոհեմութեան քարոզ կարդալով» Ծառեցին կովող ուժերը և մեծ վնաս պատճառեցին գործին: Մյուս պատճառը պայքարի ելած ուժերի մեջ միասնականության բացայացությունն էր. «Կուսակցութեանց անհամաձայնութենէն և համերաշխ չգործելէն մեծ մասամբ օգտւեցաւ թշնամին և ատկէ յառաջացած անցեալ տիպուր գեպքերը ...»²²: Մուրատն իր ճառում կոչ է անում «Յեղափոխական գործէն քաշող չեղոք հայրենակիցներին» ոտքի կանգնել և պաշտպանել իրենց իրավունքները, հեռու մնալ օտար երկրներ գաղթելուց, քանզի, իր իսկ բնորոշմամբ՝ «Հայուն հողը, տեղը, բնակարանը Հայաստանն է»²³: Զարգացնելով այս միտքը՝ «Յաղթանակը պատոյ իրաւունքի ժողովրդինն է» խմբագրականում Շահումյանը դատապարտում է «անասնական համբերատարութիւնը», որի հետևանքով հայ ժողովրդի մի գգալի հատված, թողնելով «պապերի գերեզմանները» լքեց հայրենի հողը, սկսեց «վատաքար բաղդ փնտուել օտար երկրներում»²⁴: Կարևորելով ազգային արժանապատվության հարցը՝ նա գրում է. «Պատիւ... Ի՞նչ կայ դրանից աւելի թանկ, աւելի բարձր և աւելի սուրբ, սակայն հայ ժողովրդի դատապարտութեան արժանի անտարբերութեան շնորհիւ թէ՛ մարդկային և թէ՛ իր ընտանեկան այդ սրբութիւնը պղծուել է դարեր շարունակ ու անպատիծ կերպով»²⁵: Խմբագրական հոգվածում շեշտվում է այն միտքը, որ ազատ հայրենիք ստեղծելու միակ ճանապարհը համբենդհանուր գինված պայքարի ուղին է: Մեկ այլ խմբագրականում Շահումյանը պատասխանում է հայության չեղոք հատվածի այն պնդմանը, թե իրը ժողովուրդն «աւելի բաղդաւոր» կիներ, եթե ազատագրական շարժում չծավալեր: «20 տարուց ի վեր պայքարում ենք այս համոզմունքի սխալականութեան դէմ», – գրում է հեղինակը: Հատ նրա, նման մտայնության կրողները չուզեցին ըմբռնել,

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում:

²² «Երիտասարդ Հայաստան», 08. I. 1908:

²³ Նույն տեղում:

²⁴ «Երիտասարդ Հայաստան», 22. I. 1908:

²⁵ Նույն տեղում:

«մէ դամոկլեան սրի պէս տաճկահայ ժողովրդի գլխին կախուած է «օսմանեան ազգային քաղաքականութեան» արհաւիրքը», որի արդյունքում հայ ժողովրդին սպառնում էր իսլամացման վտանգը²⁶:

«Յետադարձ ուղղութիւն» խմբագրական հոդվածը «յեղափոխական գործունեութիւնը»²⁷ համարում է հայ ժողովրդի համար «միակ ուղին», իսկ բոլոր նրանց, ովքեր նպատակ ունեն շեղել նրան այդ ուղուց և զբաղեցնել «բացառապէս լէզալ գործերով», անվանում է «յետադարձ ուղղութեան պաշտպաններ», որոնց տեսակետը հայուրարում է ժամանակավորեպ ու վնասակար ընդհանուր գործին²⁸:

«Երիտասարդ Հայաստանը» տպագրում է Թավրիզի հնչակյանների կազմակերպած հանդեսում Արտեմիուսի արտասանած ճառը, որի եզրափակիչ մասում բանախոսը կոչ է անում կուսակիցներին «անվեհերությամբ մասնակցելու գալիք թէ՛ Ռուսաստանի և թէ՛ արիւնլւայ ՏաճկաՀայաստանի ապստամբութիւններին», կովել բռնակալների դեմ հանուն ճնշված ու հարատահարված հայ ժողովրդի²⁹: Ինչպես տեսնում ենք, բանախոսը ուռսական և թուրքական վարչակարգերը դիտարկում է նույն հարթության մեջ՝ կոչ անելով մասնակցել իշխանությունների դեմ բարձրացված ապստամբություններին:

Արտեմիուսի ճառը, որն ավարտվում է «Կորչի՛ն աշխարհի բոլոր բոնակալները», «Կորչի՛ Կարմիր սուլթանը», «Կեցցե՛ Միջազգային Սօցիալ-դեմօկրատիան», «Կեցցե՛ փրկարար Սօցիալիզմը», «Կեցցե՛ հնչակյան կուսակցութիւնը» կոչերով, տվյալ ժամանակաշրջանի հնչակյան տեսաբանների մտայնության ու գործելակերպի տիպիկ արտահայտությունն է: «Հեղափոխականությամբ» տոգորված հնչակյան գործիչներն անտեսում կամ աչքաթող են անում այն կարևոր հանդամանքը՝ դրա իրագործման ընթացքում անխուսափելիորեն տեղի կունենա հայության ազգային ուժերի պառակտում, որն էլ ավելի անիրատեսական կդարձնի արևմտահայության ձգտումը. այն է թուրքական տիրապետությունից ազատագրվելու հայության իրական գերիսնողիրը: Գաղափարական դուռալիզմը դարձավ կուսակցության պառակտման պատճառներից մելլո: Այս համատեքստում անդրադառնալով հնչակյան կուսակցության ներքին դրության հարցերին՝ «Արձագանքներ» վերլուծական հոդվածում Արծրունին սուր քննադատության է ենթարկում հնչակյան այն հատվածին, որոնք ձգտում են «ուրանալ տասնեակ տարիներով իրենց դաւանած սկզբունքներն ու գաղափարները, մէկ հարւածով դէն շպտել ... տանջված ժողովրդի սրբազն դասոր»³⁰:

Արձարծելով կուսակցության այս հատվածի մտայնությունը՝ Արծրունին հեգնանքով գրում է. «Զէ՞ որ Ռուսաստանի նոր կեանքը նրանց համար մօտնի սօցիալ-դեմօկրատիզմ է քարոզում, չէ՞ որ նրանց հայեացքով

²⁶ «Երիտասարդ Հայաստան», 05. II. 1908:

²⁷ Ժամանակի տերմինաբառնությամբ արևմտահայերի «յեղափոխական գործունեություն» ասելով՝ պետք է հասկանալ ազգային-ազատագրական պայքարը:

²⁸ «Երիտասարդ Հայաստան», 15. I. 1908:

²⁹ «Երիտասարդ Հայաստան», 22. I. 1908:

³⁰ «Երիտասարդ Հայաստան», 05. II. 1908:

ազգութիւնը դատարկ բան է... Զէ՞ որ մեր պարոնները Մարքսից աւելի մարքսիստ ու Պապից աւելի կաթոլիկ են»³¹:

Նկատենք, որ հայ ազգային-քաղաքական կյանքում ապագա սոցիալաստական հասարակության մասին տարաբնույթ և աղոտ պատկերացումները, սոցիալիզմի գաղափարախոսության դոգմատիկ ընկալումն ու քարոզությունը պատմական իրականության անտեսման պայմաններում ծանր և անդառնալի հարված հասցրին հայ ազգային ուժերի միասնության ու համաձայնության և ազգային խնդիրների իրականացման գործին:

Հայ ժողովրդի ու, հատկապես, նրա արևմտահայ հատվածի սոցիալանտեսական վիճակի հարցերը լայնորեն լուսաբանվում են պարբերականի՝ «Նամականի» և «Թղթակցութիւններ» բաժիններում: Տպվում են ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ արտասահմանի տարբեր երկրների սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրավիճակի մասին հաղորդումներ: Դրանք կրում են «Նամակ Բաքվից», «Նամակ Սոփիայէն», «Նամակ Թավրիզէն» խորագրերը և այլն: Օրինակ՝ «Նամակ Գուղառտէն» հաղորդման մեջ խոսվում է Սև ծովի Կովկասյան ափերը գաղթած համշենահայերի ծանր տնտեսական դրության մասին, որոնց կեղեքում, շահագործում են «հողատէր անկուշտ կնեազները, վաշխառուները, ցարիզմի անկուշտ չինովնիկները»: Հեղինակը (Գոռ-Իշխանիկ) ցավով նշում է, որ օտարներից առավել «կեղեքում են հայ չորբաճիները»³²:

Պարբերականի «Թղթակցութիւններ» բաժնում անփոփոխ տպագրված է «Տարոնցի» ծածկանունով թղթակցի «Նամակ Մշոյ դաշտէն» հաղորդումը, որում ներկայացված է Տարոն գավառի հայության իրական դրությունը, թուրք-քրիտական բռնությունների սաստկացումը Սասնո դեպքերից և հայդուկային շարժման վայրէջքից հետո ընկած ժամանակաշրջանում: Նամակը լի է ողբերգական շեշտագրումներով և ավելի շատ անելանելի վիճակից դուրս գալու աղերանք է հիշեցնում: Դրա հեղինակը փորձում է առաջ տանել այն միտքը, որ թուրք-քրիտական հալածանքների ուժնացումն ուղղակիորեն պայմանավորված էր հայ «յեղափոխականների» գործունեությամբ, որոնցից յուրաքանչյուրի հետ իրենք մեծ հույսեր էին կապել: Նշվում են Մ. Տամատյանի, Մուրատի, Սերոբի, Անդրանիկի անունները: Հեղինակն ի ցույց է գնում Տարոնի հայության հավաքական վերաբերմունքն ազատագրության գործին, վեր է հանում ոչ թե պայքարելու, այլ դաժան իրականության, դառը ճակատագրի հետ համակերպվելու, իրենց վրկությունն առանձին հայութկների կամ օտար միջամտության հետ կապելու հայ աշխատավորի մեջ իշխող ցավալի մտայնությունը³³:

Ուշագրավ է նամակագրի կողմից «յեղափոխականների» գործելակերպը բնորոշող այն վկայությունը, ըստ որի՝ վերջիններս զենք գնելու նպատակով գյուղացիներին համոզում էին կամ նույնիսկ ստիպում ծախելու իրենց անասունը, բայց շատ դեպքում թե «զենք ինչ եղաւ չէմք գիտէր»³⁴: Նամակի հեղինակը, մասնավորապես, գանգատվում է Անդրանիկից, սա-

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում:

³³ «Երիտասարդ Հայաստան», 06. V. 1908:

³⁴ Նույն տեղում:

կայն մեզ համար հասկանալի է դառնում այն հանգամանքը, որ, չբացառելով առանձին ծայրահեղ քայլերը, վերջինս իրեն բնորոշ մեթոդներով փորձել է հայ աշխատավորի գիտակցության մեջ մտցնել ամեն գնով զինվելու, իր տունը, ունեցվածքը, պատիվն իր ձեռքով պաշտպանելու գաղափարը³⁵:

Տարոնի հայության դեմ գործած քրդական վայրագությունների նկարագրությունն է տրված պարբերականի «Նամակ Մուշէն» թղթակցության մեջ³⁶:

Պարբերականը տպել է Ասօի (Տիգրան Օտյան) հոդվածը Ռւրմիա լճի մոտ գտնվող ասորաբնակ Մավանա գյուղի մասին, որը հերոսաբար դիմադրել է թուրք-քրդական հրոսակներին ու ոչնչացվել³⁷:

«Երիտասարդ Հայաստանի» ուշադրության կենտրոնում էին Պարսկաստանի ներքաղաքական իրավիճակին վերաբերող հարցերը³⁸: Պարսկական խնդրին է նվիրված նաև Ս. Հովյանի «Խորասանի նամականի» հոդվածը³⁹: «Նամակ Թավրիզէն» հաղորդման մեջ ներկայացվում է 1908 թ. Թավրիզի խառն ու վտանգավոր իրավիճակը՝ ամեն օր բախումներ, սպանություններ, կովկներ շահի և սահմանադրական շարժման կողմնակիցների միջև⁴⁰: Հեղինակն (Artemius) արծարծում է «Պարսկաստանը բաժան-բաժան անելու նենգաւոր Ալբիոնի-Անգլիայի, գիշատիչ ուսւ կառավարութեան և կարմիր գաղանի՝ սուլթան Համիտի գիտաւորութիւնների» հարցը⁴¹:

Շաբաթաթերթը մեծ տեղ է տալիս միջկուսակցական հարաբերություններին վերաբերող հարցերին: Պարբերականի բազմաթիվ հոդվածներում ու հաղորդումներում լուսաբանվում են միջկուսակցական համագործակցության, ինչպես նաև՝ միջկուսակցական պայքարի խնդրիները: Ընդհանուր առմամբ, «Երիտասարդ Հայաստան» արտահայտված Հակադաշնակցական ուղղություն ուներ: 1908 թ. գեկտեմբերի մի շարք համարներում կան արտաստված հոդվածներ «Իրավունք», «Երկի ձայն», «Մշակ», «Լուսաբեր» թերթերից, որոնցում դատապարտվում է թուրք-դաշնակցական համագործակցությունը՝ այն որակելով «ոչ միայն ցաւալի, այլև ամոթալի երևույթ»⁴²:

1908 թ. մարտի 4-ի համարի խմբագրական հոդվածում քննադատության է ենթարկվում դաշնակցությունը, որը, մերժելով Մուրատի առաջ քաշած ազգային կուսակցությունների համերաշխության գաղափարը, Փարիզում՝ համաձայնություն է կնքում երիտասարդ թուրքերի հետ սուլթանական կարգերը տապալելու հարցի շուրջ: «Ժէօն թիւրքերը լինելով համաօսման շարժման կուսակիցներ Հայկական վեց նահանգների ազատութեան իրավունքը չեն ճանաչում ...», — գրում է Շ. Շահումյանը:

³⁵ Նույն տեղում:

³⁶ «Երիտասարդ Հայաստան», 05. VII. 1911:

³⁷ «Երիտասարդ Հայաստան», 15. I. 1908:

³⁸ «Երիտասարդ Հայաստան», 19. II. 1908, 26. II. 1908:

³⁹ «Երիտասարդ Հայաստան», 01. IV. 1908:

⁴⁰ «Երիտասարդ Հայաստան», 08. I. 1908:

⁴¹ «Երիտասարդ Հայաստան», 29. I. 1908:

⁴² «Երիտասարդ Հայաստան», 19. II. 1908, 26. II. 1908, 04. III. 1908:

Հստ նրա, թուրք-դաշնակցական համերաշխությունը տապալում է հայկական նահանգների բարենորոգումների ծրագիրը և նրա փոխարեն առաջ է մղվում «Թիւրքիան նորագոյն պետութեան վերածելու նպատակը, մի կոչում՝ որ մենք (հայերը – Գ. Հ.) բնաւ չենք ստանձնած»:

1908 թ. մայիսի 20-ի խմբագրականում քննադատության է ենթարկվում Մարտելում հրատարակվող «Արմենիա» թերթի խմբագիր Մկրտիչ Փորթուգալյանը, որը երիտթուրք-դաշնակցության համագործակցությանը հնչակյանների գեմ լինելը պատճառաբանել է միջկուսակցական մրցակցությամբ։ Ցույց է տրվում, որ իրականում հնչակյաններն առաջնորդվում են ազգային շահով։

Պարբերականի համարներում կան վանից ստացված նամակներ, ուր նկարագրված են դաշնակցականների և արմենականների զինված բախման դեպքերը⁴³։ Մի կողմ թողնելով կուսակցական խնդիրները՝ պարբերականը հարգանքի տուրք է մատուցում և ցավում «ազնիւ ու համեստ անձնավորութեան, արմենականների անմոռաց պարագլուխ երվանդ Քեոսէանի (Սեպուհ) մահը»⁴⁴։ «Մշակյց» արտատպվում է «Արփիարյանի սպանութեան շուրջը» հոդվածը, ուր դատապարտում են այդ ոճրագործությունը։ Թեպետ նշվում է, որ հնչակյանների ու Արփիարյանի միջև լուրջ տարածայնություններ են եղել, սակայն ազգային գործիչների սպանությունը պարբերականը դատապարտում է⁴⁵։

«Ազնիվ պայքարը» հոդվածաշարով հնչակյան գործիչ, տեսաբան Սոկրատ խան Գելոֆյանցը բանավեճի մեջ է մտնում սահմանադրական-ռամկավարների հետ։ Նա առաջ է մղում և պաշտպանում դասակարգային պայքարի ու ընկերվարության գաղափարը և ճիշտ չի համարում հասարակության տարբեր խավերի համերաշխության ու ազգի իրավունքների համար համատեղ պայքարի սահմանադիր-ռամկավարների տեսակետը⁴⁶։

«Երիտասարդ Հայաստանի» քննադատության թիրախում էին նաև վերակազմյալ հնչակյանները, որոնց կազմից պարբերականն առանձնում էր հատկապես Ա. Արզույանին ու նրա համախոհներին, որոնք կազմում էին այդ կուսակցության արմատական թերը⁴⁷։

Միջկուսակցական հարաբերությունների համատեքստում պարբերականը նաև արծարծում է հայոց եկեղեցու ու ազգային կուսակցությունների փոխհարաբերությունների հարցը⁴⁸։

«Երիտասարդ Հայաստանի» արծարծած թեմաների շարքում առանցքային նշանակություն ունեն հայկական բարենորոգումներին և երիտթուրքերի շարժմանը վերաբերող հարցերը, որոնց լուսաբանմամբ աչքի է ընկնում Ստ. Սապահ-Գյուլյանը։ «Թուրք բռնապետութիւնը եւ Երիտասարդ թուրքերը» հոդվածաշարում անդրադառնալով երիտթուրքերի գաղափարախոսությանը, նրանց նպատակներին ու գործունեությանը՝ նա գրում է,

⁴³ «Երիտասարդ Հայաստան», 25. III. 1908, 15. IV. 1908:

⁴⁴ «Երիտասարդ Հայաստան», 15. IV. 1908:

⁴⁵ «Երիտասարդ Հայաստան», 18. III. 1908:

⁴⁶ «Երիտասարդ Հայաստան», 19. II. 1911, 22. II. 1911, 01. III. 1911:

⁴⁷ «Երիտասարդ Հայաստան», 31. VIII. 1910:

⁴⁸ «Երիտասարդ Հայաստան», 08. VII. 1908:

որ 1907թ. գեկտեմբերին Փարիզում կայացած Օսմանյան կայսրության ընդդիմաղիր ուժերի կոնգրեսի կազմակերպիչ «Միություն և առաջադիմություն» կուսակցության ներկայացուցիչները հրաժարվեցին ճանաչել կայսրությունում ապրող ժողովուրդների՝ հույների, ալբանացիների, մակեդոնացիների, արաբների, հայերի «միջազգայնօրէն ճանչցուած դատերի գոյութեան իրողութիւնը և իրաւունքը»⁴⁹: Հեղինակը գտնում է, որ դաշնակցականների մասնակցելը կոնգրեսի աշխատանքներին և համագործակցությունը իմթիհատի հետ հայ ժողովուրդի համար որևէ զբական տեղաշարժ չի առաջացնելու և «Տաճկահայ դատը նորից առաջ կերթայ իր ինքնուրոյն ճանապարհովը ինչպես որ մինչև ցարդ»⁵⁰: Համեմատության համար Սապահ-Գյուլյանը բերում է ոռոսական բռնակալության դեմ ոտքի ելած քաղաքական ուժերի՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության և ոռուս սահմանադրական-դեմոկրատական կուսակցության (կաղեստներ) օրինակները, որոնք նոր Ռուսաստանի ստեղծման ճանապարհին ընդունում էին երկրի բաղկացուցիչ ժողովուրդների ազգային-հավաքական գոյության ու տեղական ինքնավարության իրավունքը: Այդ կուսակցությունների հետ Ռուսաստանի տարբեր ժողովուրդների ազգային կուսակցությունների համագործակցությունը ցարիզմի դեմ պայքարում հողվածագիրը հասկանալի է համարում⁵¹:

Սապահ-Գյուլյանը գրում է, որ երիտթուրքերը հպատակ ժողովուրդներին առաջարկում են «գէնքը վայր դնել»՝ անորոշ և անստույգ խոստումներ տալով, սակայն հայ ժողովուրդը չի կարող հրաժարվել մեծ գոհողությունների գնով ձեռք բերված և միջազգայնորեն ճանաչված իր իրավունքից. մի իրավունք, որը «առվաճան Համիտը, ինքը բռնավորը ստիպւել է ճանաչել»⁵²: Հողվածում հեղինակը նշում է, որ երիտասարդ թուրքերը մինչև վերջ չճանաչեցին Հայկական խնդիրը և նրա դեմ պայքար մղեցին «Ծերունիներից» ոչ պակաս թափով: Հաստ նրանց թեովինի 61-րդ հոդվածը, Մայիսյան բարենորոգումների ծրագիրն օսմանյան պետության անկախությունը ուժնահարող գործողություններ էին, հետևաբար, նրանք մշտական հանդես են եկել այդ սկզբունքները պաշտպանող պետությունների դեմ⁵³: Սապահ-Գյուլյանը մերժում է երիտթուրքերի առաջ քաշած այն թեզը, թե 1890-ական թվականներին Հայկական կոտորածների միակ պատասխանատուն սուլթան Համիդն է: Նա Հայտարարում է, որ այդ կոտորածների «պատճառը և պատասխանատու ազգակը թրքական նացիօնալիզմն է եղած», ու այդ կոտորածների ընթացքում «իրենց բաժինը ունեցան և՛ թուրք գորքերը, և՛ ինքը թուրք ժողովուրդը»⁵⁴: Նրա համոզմամբ՝ երիտթուրքերը պարտավոր էին դա խոստովանել և ոչ թե ողջ պատասխանատվությունը դնել միայն սուլթանի վրա:

⁴⁹ «Երիտասարդ Հայաստան», 11. III. 1908:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Նույն տեղում:

⁵² «Երիտասարդ Հայաստան», 18. III. 1908:

⁵³ «Երիտասարդ Հայաստան», 25. III. 1908:

⁵⁴ «Երիտասարդ Հայաստան», 29. IV. 1908:

Սապահ-Գյուլյանը հերքում է երիտթուրքերի այն հայտարարությունը, թե Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներն էլ նույն հալածանքներին են ենթարկվել ինչպես Հայերը և Հիմնավոր փաստերով (Հայերի հողերի ապօրինի զավթումներ, ազատ տեղաշարժի արգելք, բազմաթիվ հարկեր ու այլն) ի ցույց է դնում այդ հայտարարության հիմնազորք լինելը։ Հողվածագիրը պարզաբանում է, որ, «Հեղափոխություն» ասելով, ըստ էության, երիտթուրքերը «պալատական դավադրութեամբ անձի փոփոխութիւն են հասկանում»։ Նրանց իրական էությունը ցույց տալու համար Սապահ-Գյուլյանը վկայակոչում է իմթիհատական օրգան «Մեշվերեթի» 1908 թ. հունվարի 1-ի համարը, որում թերթը իմթիհատի հետ չհամագործակցող ուժերին համարում է «ներքին թշնամի»⁵⁵։ Այս փաստարկներից հետո Սապահ-Գյուլյանը եղրակացնում է։

1) «Երիտասարդ թուրքերը» ձգտում են «խեղդել ինչպես ուրիշ նույնապես և Հայկական Դատը և սահմանադրութեան կիրառութեամբ իրականացնել թուրք նացիօնալիզմը և թուրք ազգային քաղաքականութիւնը՝ իր բոլոր հետևանքներով»։

2) «Իրենք յեղափոխականներ չեն և համագործակցութեան գաղափարը իրենց համար մի միջոց է ներքին շարժումների առաջն առնելու, որպեսզի արտաքին միջամտութիւն չլինի»։

3) ««Երիտասարդ թուրքերի» հետ համագործակցութեան մէջ կարելի է մտնել միայն այն ժամանակ, եթե իրենք օսմաննեան կայսրութեան ամբողջական վերանորոգման գաղափարը պաշտպանած ժամանակին՝ միատեղ կը պաշտպանեն և՝ ինքնավար Հայաստանի գաղափարը»։

4) «Նոր Թիւրքիայի շինութեան և վերանորոգութեան մէջ բոլոր ազգերը և դասակարգերը համահաւասար ձայն և իրաւունք պիտի ունենան ինչպես և նույնանման պարտականութիւններ»։ Եթե այս նախապայմանները չեն իրագործվելու երիտթուրքերի կողմից, ապա «մեզ համար չկայ ընդհանուր Թիւրքիայի վերանորոգութեան օսմաննեան համապետական խնդիր»։ Մեզ համար կա միայն Հայաստան և Հայկական խնդիր։ Քսան տարուայ թափած արիւնից յետոյ մենք չենք կարող ձեռք վեր առնել մեր իրաւունքներից և ընկնել ստուերների յետևից»⁵⁶։

Խոսելով երիտթուրքի հետ համագործակցության մասին «Համերաշխութիւնը ճեղքում է» խմբագրականում՝ Շահումյանը գրում է, որ երիտթուրքերն այդպես էլ չճանաչեցին Հայկական հարցի գոյությունը և նրա գեմ պայքար մղեցին «Հին թուրքերից ոչ պակաս թափով»։ Եվրոպական միջամտությունը բացառելու նպատակով Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող Հայկական, Մակեդոնական, Արաբական, Ալբանական և այլ հարցերը ժխտելու դիրքորոշման որդեգրումը հողվածագիրը համարում է «մէօն թուրքերի հաւատոյ հանգանակը»⁵⁷։

Հեղինակը հավատ չի ներշնչում երիտթուրք-դաշնակցություն համագործակցությանը։ Հակադրվելով դաշնակցականների այն պնդումներին,

⁵⁵ Նույն տեղում։

⁵⁶ Նույն տեղում։

⁵⁷ «Երիտասարդ Հայաստան», 06. V. 1908:

թե համագործակցելով երիտթուրքերի հետ իրենք չեն հրաժարվել ո՛չ Հայկական հարցից և ո՛չ էլ եվրոպական միջամտությունից Շահումյանը վկայակոչում է երիտթուրքերի օրդան «Մեշվերեմի» խմբագիր Ահմեդ Ռոզայի խոսքերը, որը, պատասխանելով “L'Humanité” և “Pro Armenia” թերթերի այն հրապարակումներին, թե երիտթուրքերն «ընդունել են յեղափոխական ամէն միջոցները»՝ ընդգծել է իրենք մերժում են օտար պետությունների միջամտությունը և հեղափոխությունների այն բնույթն ու ընթացքը, որոնք տեղի ունեցան Ֆրանսիայում և Ռուսաստանում:

Խմբագրականը եզրակացնում է, որ, հակառակ դաշնակցականների բոլոր հավաստիացումներին, «Ժէօնթթուքօ-դաշնակցական» համերաշխությունն ապագա չունի, քանի որ հիմնված է «անվատահութեան ու կեղծիքի վրայ և չի վայելում ընդհանուր հայ ժողովրդի համակրութիւնը»⁵⁸: Ժամանակը ցույց տվեց այս եզրակացության հիմնավոր լինելը:

1908 թ. հուլիսին երիտթուրքական հեղաշրջումից հետո Թուրքիա վերադան սուլթանական վարչակարգին ընդդիմադիր շատ գործիչներ, այդ թվում հնչակյաններ: Օգոստոսի 16-ին հնչակյան պատվիրակները (Սապահ-Գյուլյան, Մուրատ, Հ. Ճանկյուլյան, Մ. Տամարյան) պաշտոնական այցելություն կատարեցին Կ. Պոլսի իթթիհաստական կոմիտեի կենտրոնատեղին, որտեղ նրանց ընդունեց գոկտոր երիտթուրքերի պարագլուխներից Բեհչաէդդին Շաքիրը⁵⁹: Հնչակյանները ողջունեցին երկրում հոչակ-ված Սահմանադրությունը և հույս հայտնեցին, որ այն հնարավորություն կրնձեռի խորհրդարանական պայքարով հետզհետե ընդլայնել գեմոլիքատական կարգերը: Թեսեատ հնչակյանները ողջունեցին օսմանյան Սահմանադրության վերահաստատումը՝ այն համարելով առաջադիմական, կարողացան դուրս գալ ընդհաստակից և անցնել լեզար գործունեության, այնուամենայնիվ շարունակում էին անվատահությամբ ու թերահավատորեն վերաբերվել երիտթուրքերի խոստումներին: Պատահական չէր հետեւյալ հանգամանքը. երբ Կ. Պոլսի վերադարձած Փարամազը, Ասօն և ուրիշ գործիչներ ձգտում էին կուսակցության կենտրոնը Փարիզից Կ. Պոլսի տեղափոխել, դրան գեմ է արտահայտվում Սապահ-Գյուլյանը: Նա մինչև վերջ համոզված մնաց «Թուրքի անհավատարմութեան, հայաջինջ քաղաքականութեան իր սկզբունքին և երբեք չէր ուզիլ, որ կեդրոնը փոխադրուեր Պոլս»⁶⁰:

«Թուրքական սահմանադրութեան առթիւ» խմբագրականում Սոկրատ Գելոֆյանցը վերլուծության է ենթարկում սուլթանի կողմից 1908 թ. հուլիսի 24-ին արած հայտարարությունն օսմանյան Սահմանադրության հոչակման մասին: Ո՞րն էր դրա շարժառիթը, ինչո՞ւ «երեսուն տարուց ի վեր, Միդհատի հետ գերեզման իջած Սահմանադրութիւնը» սուլթանը կրկին կյանքի է կոչում: Հողվածում ցույց է տրվում, որ դրա բուն պատճառը ոչ թե սուլթանի հանկարծահաս բարեհաճությունն է, այլ այն՝ նա

⁵⁸ Նույն տեղում:

⁵⁹ «Ազգ» (Բոստոն), 26. IX. 1908:

⁶⁰ Սապահ-Գիւլեան Բերուղ. Կենսագրութիւն Ստեփան Սապահ-Գիւլեանի, Նիւ-Եօրք, 1936, էջ 88:

տեղի է տվել «յեղափոխական գրոհի առաջ՝ պաշտպանելու համար օսմանեան բռնակալական գահի երերուն հիմքերը»⁶¹: Խմբագրականում մեկ այլ հանգամանք էլ է նշվում. Վիլհելմ կայսրն անհանգստանալով Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի ռազմաքաղաքական մերձեցումից, Թուրքիայի վրա ունեցած իր ազգեցությունը պահպանելու, Թուրքիայում Գերմանիայի տնտեսական ու ռազմավարական շահերը պաշտպանելու մտայնությամբ՝ խորհուրդ է տվել սուլթանին՝ «Մակեդոնիան չտալու և եվրոպական միջամտութիւն չունենալու համար մի անգամ ևս հրապարակ նետէ Սահմանադրութեան լէշը», որի շուրջն առաջացած «տգես ու տղայական ամբոխի խրախճանքը» ժամանակ շահելու հնարավորություն կրնածեոի և կիսուընդուտի Մակեդոնիայի անջատումն ու եվրոպական միջամտությունը»⁶²:

Լինելով հնչակյան կուսակցության օրդան՝ «Երիտասարդ Հայաստանը», բնականաբար, պետք է արտահայտեր կուսակցության որդեգրած գործունեության նոր ուղղությունը: Այսինքն՝ պարբերականը տպագրում է Կ. Պղասում կայացած ՄԴՀԿ 6-րդ Ընդհանուր պատգամավորական ժողովի (1909 թ. Հուլիս) հայտարարությունը, որում ողջունելով օսմանյան Սահմանադրությունը՝ հայտարարում էր՝ կուսակցությունը հրաժարվում է ընդհատակյա գործունեությունից և «կանգնում գործունեութեան լէգալ հողի վրայ»: Ինչ վերաբերում էր Ռուսաստանին, ապա ժողովն որոշեց շարունակել նախկին անլեզալ գործունեությունը, մինչև «կը խորտակւին ներկայ միապետական-բռնապետական կարգերը ...»⁶³: Մինչ այդ հնչակյան կուսակցությունը հայերեն և թուրքերեն հայտարարություն տարածել էր, որում ողջունում էր «օսմանեան հայրենակիցները Խորհրդարանին բացման առթիւ»⁶⁴:

«Տաճկական թեղափոխութիւնը եւ մեծ պետութիւնները» հոդվածում Տաշիրը հույս է հայտնում, որ Երիտասարդ Թուրքերը չպետք է բավարարվեն ձեռք բերածով, այլ պետք է ընդարձակեն, ընդայնեն իրենց գործունեությունը խորհրդարանի գումարմամբ, մինչև որ կայսրության բոլոր ժողովուրդները նույն իրավունքներն ու արտանությունները, նույն քաղաքական ու զինվորական պարտականություններն ունենան, «քանի որ ազգութիւնների և ժողովուրդների ինքնաւարութեան խնդիր կա մեր տեսակետից»: Հոդվածագիրն իրավացիորեն կարծում է, որ այդ դեպքում եվրոպական մեծ պետությունների կողմից ազգային հարցերի շահարկումներին վերջ կտրվի: Տաշիրը ճիշտ էր նաև այն հարցում, որ ամեն մի մեծ պետություն «կամենում է խանգարել, որպեսզի որևէ ուղիւ Մեծ պետութիւն պարտած թիւրքիայի հաշւով առաւել ուժեղ չդառնայ»⁶⁵:

1909 թ. ապրիլին տեղի ունեցավ կիլիկիահայության սոսկալի կոտորածը, որին զոհ գնաց շուրջ 30 հազ. մարդ: Երիտթուրքերը ցույց տվեցին իրենց հրեշավոր էությունը: Կիլիկիահայության կոտորածների կապակցությամբ

⁶¹ «Երիտասարդ Հայաստան», 19. VIII. 1908:

⁶² Նույն տեղում:

⁶³ «Երիտասարդ Հայաստան», 12. I. 1910:

⁶⁴ «Երիտասարդ Հայաստան», 06. I. 1909:

⁶⁵ «Երիտասարդ Հայաստան», 02. IX. 1908:

«Նոր ջարդը» խմբագրականում Բ. Վարագողատը գրում է. «Հազիւ ինն ամիսներ էին անցած «Ազատութիւն, Հավասարութիւն և Եղայրութիւն» հրապուրիչ խորագլերու տակ Թիւրքիոյ մէջ ներկայացւած թատերգութեան վրայէն, ահա՝, անոր տիսուր դերակատարներէն կիսավայրենի թիւրքը վար առնելով դիմակը՝ բեմին վրայ դուրս կուգայ իր իսկական պատկերով»⁶⁶: Նա մատնանշում է այն հանգամանքը, որ օսմանյան Սահմանադրության հոչակումից հետո, հակառակ հայ ժողովրդի զինաթափ լինելու «փաշաների, պնակալեզների և բուրժուագիայի խնկարկումներ ու բարբաջանքներին», հնչակյանները շարունակեցին նրանց զինելու իրենց գործը՝ «կազմ ու պատրաստ գտնելու համար գալիք ընեաքսիոնէրական շարժումներու դէմ»: Հողվածում առաջ է մղվում մի կողմից կիլիկիահայության «նիւթական օգնութիւն հասցնելու» և մյուս կողմից՝ «ինքնապաշտպանութեան» անհետաճգելի գործը⁶⁷:

«Սուլթանին գահընկեցութիւնը» խմբագրական հողվածում Սոկրատ խան Գելոֆյանցը պահանջում է խատորեն պատմել կիլիկիահայության կոտորածի հեղինակներին, որի համար նա մեղադրում ու դատապարտում է և՝ սուլթանին, և՝ երիտթուրքերին: Վկայակոչելով երիտթուրքերի պարագուխներից Ակմեդ Ռովայի՝ «եթե հայերդ հանգիստ չմնաք պիտի կոսորուիք» հայտարարությունը՝ հողվածի վերջում Գելոֆյանցը գրում է. «Եւ այս բոլորը հակառակ հայ տարրի անկեղծ ցանկութեան, որի միակ բաղձանքն է Թիւրքիան եւ իր Հայրենիքը տեսնել ինքնապարզացման շաւդին մէջ, առանց օտարի, առանց եւրոպայից եկած օգնութեան»⁶⁸:

Բալկանյան թերակղզու ժողովուրդների դեմ թուրքական կառավարության գործադրած բռնուվթյունների կապակցությամբ պարբերականի «Թիւրքիոյ տագնապը» հաղորդման մէջ ընդգծվում է այն հանգամանքը, որ «Ժէօն Թիւրքերը, որ այնքան հոչակ ստացեր էին իրենց «անկեղծութեան, ազատամտութեան և արդարասիրութեան» համար, հետզհետէ կը վարկաբեկւին իրենց որդեգրած ներկայ պժողալի սիստէմին համար»⁶⁹:

«Նօթեր նոր Թիւրքիոյ իրականութենէն» խմբագրականում Հմայակ Արամյանցը գրում է, որ հակառակ սահմանադրական Թուրքիայի իշխանությունների հավաստիացումներին, թե օսմանյան պետության քրիստոնյաների «ցարդ վայելած իրաւունքները պիտի մնան անձեռնմխելի, նոյն այդ վարչութիւնը գործնական կեանքի մէջ ամեն կերպ կաշխատի հակառակն ընել»: Նա փաստերով ցույց է տալիս, որ «Նոր Թիւրքիան հաւատարիմ հետապնդողն եղաւ համիտեան քաղաքականութեան»⁷⁰:

«Ազգային իրավունքներ եւ ոչ թէ առանձնաշնորհումներ» հողվածում Սապահ-Գյուլյանը հերքում է իշխանության այն մտայնությունը, թե հայ ժողովուրդը ձգտում է առանձնաշնորհումներ ստանալ և արտոնյալ դիրքում հայտնվել: Նա շեշտում է, որ «կարծեցյալ արտօնութիւնները, առանձնաշնորհումները ոչ այլ ինչ են, եթե ոչ ազգային անհրաժեշտ իրա-

⁶⁶ «Երիտասարդ Հայաստան», 28. IV. 1909:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ «Երիտասարդ Հայաստան», 05. V. 1909:

⁶⁹ «Երիտասարդ Հայաստան», 19. I. 1910:

⁷⁰ «Երիտասարդ Հայաստան», 16. VI. 1909:

վունքներ», առանց որի հայ ժողովուրդը չի կարող գոյատևել, իրավունքներ, որոնք պետք է հարգել և ընդլայնել՝ «դա է պահանջում թիւրք պետութեան իրական շահը»։ Հոդվածագիրը գտնում է, որ սահմանադրական թուրքիայի ներքին անկայուն վիճակի հիմնական պատճառը ոչ թե հայերն են, այլ՝ «թուրքական նացիօնալիզմը»⁷¹:

«Երիտասարդ Հայաստան» անդրադառնում է նաև թուրքական կառավարության կազմած բարենորոգումների ծրագրին։ Սուլթանի հրովարտակով հաստատված ծրագիրը, որը պիտի ներկայացվեր օսմանյան խորհրդարանի քննարկմանը, պարբերականը «աչքակապութիւն» է համարում։ Անիմաստ է համարում նաև դրա կետերի մասին խոսելը, նրան գնահատական տալը։ Ընդգծվում է այն միտքը, որ այդ ծրագրով կառավարությունը նպատակ ուներ «այս անգամ ալ թաղել հայերու իրական դժգոհութիւնները եւ վերատին մոռացութեան ու խարկանքի մէջ ծրարել Հայկական հարցը»⁷²։ Ըստ պարբերականի՝ խնդիրը լավ ու վատ ծրագրերի կազմությունը չէ, այլ այն՝ «եթե գոյութիւն ունեցող օրենքները իրապէս գործադրուէին, ապա վաղուց վերացված կինեին հայ ժողովրդին գանգատներն ու դժգոհութիւնները» և պետությունն էլ քայլքայված ու կազմալուծված չէր լինի։ Գործող կառավարությունը վստահություն չի վայելում այն պատճառով, որ «հին մտայնութիւնն ու գործելակերպը կըտիրէ երկրին ու մասնաւրապէս պաշտոնեութեան մեջ»։ Այսպիսով, բարենորոգումների թուրքական ծրագիրը Սապահ-Գյուլյանը համարում է «թուրքական աչքակապութիւն», քանի որ այն գուրկ էր նաև եվրոպական վերահսկողությունից⁷³։

«Զարիքին կեղունը» խմբագրականն ավելորդ է համարում «Բարեկարգիչ յանձնախմբերու» կազմության գաղափարը, քանի որ կառավարության համար այն սոսկ ժամանակ շահելու, ըստ էության, խաբելու միջոց է, իսկ խաբելը խմբագրականի բնորոշմամբ՝ «Իթթիհատի համար քաղաքական առաքինութիւն դարձած է»⁷⁴։

Հնչակյանները հայկական նահանգներում բարենորոգումների ծրագրի իրականացման իրական երաշխիք էին համարում եվրոպական վերահսկողությունը։ Պարբերականի թղթակիցներ Ս. Հովյանն ու Ե. Սաֆարյանը թերահավատ էին բարենորոգումների ծրագրերի նկատմամբ և գտնում էին, որ դրանք գործնականում օգուտ չտալուց բացի՝ հայությանը նոր վտանգների առաջ կանգնեցրին⁷⁵։

«Երիտասարդ Հայաստանի» 1912 թ. օգոստոսի 10-ի համարի առաջնորդող հոդվածում առաջ է քաշված այն միտքը, ըստ որի, եթե թուրքիայում բարենորոգումների գաղափարը չի դառնալու պետական սկզբունք, ապա թուրքիայի ճնշված ժողովուրդները «միայն յեղափոխութիւնով և ապատամբութիւնով կրնան պարտադրել թուրք կառավարութեան տեղական բարենորոգումները»։

⁷¹ «Երիտասարդ Հայաստան», 12. IV. 1911:

⁷² «Երիտասարդ Հայաստան» (Փրովիդենս), 13. V. 1913:

⁷³ Նույն տեղում։

⁷⁴ «Երիտասարդ Հայաստան», 22. V. 1912:

⁷⁵ «Երիտասարդ Հայաստան» (Փարիզ), բացառիկ, 10. V. 1914:

1914 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում կնքված ոռուս-թուրքական համաձայնագրի և հայկական բարենորոգումների նոր ծրագրի ընդունումից հետո «Հայաստանի իղձը» հոդվածում «Կայծունի» կեղծանունով թղթակիցը (Աբրահամ Բրուտյան) Վանից գրում էր, որ «ուժորմներու ծրագրի ստորագրութիւր շատ բացասական տրամադրութիւններ է լարած դէպի հայութիւնը»: «Գեավուր», «ուայա», «միլլեթ խայինի»⁷⁶ բառերը դարձեալ սկսած են մեծ թափով շրջան ընել»⁷⁷: Հոդվածագիրը գրում է, որ տեղական առաջնորդների սադրանքով թուրք և քուրդ բնակչության անունից բողոքի հեռագրեր են ուղարկվում «բարձր Դուանը ուժորմ չենք ուզում» բովանդակությամբ: Նշում է՝ Վասպուրականի հայությունը խիստ հոռեսեսորեն էր տրամադրված բարենորոգումների ծրագրի նկատմամբ, որովհետև բոլորն էլ համոզված էին՝ «ուժորմների անվան տակ թաքնված են այս կամ այն պետութեան շահերը»: Իր վիճակի բարեկավումը ժողովուրդը կապում է «օտար գրավման կամ ազգային կուսակցութիւնների կողմից յեղափոխական ուժեղ շարժման» հետ⁷⁸:

Սրա հետ ընդգծում է այն իրողությունը, ըստ որի «թուրք և քիւրտ խուժանը դարձեալ թալանի և կոտորածի ախորժակ կըսրէ չնորհիւ օրուայ կառավարութեան գաղտնի ագէնտներու: ... Ռուսական միջամտութեան վախն է միայն, որ կը սանձէ կատաղութիւններ և պատրւակ կըլլայ բաղխումներու»⁷⁹:

«Խոչեմութեան ասպետներին» հոդվածում հնչակյան գործիչ Աբրահամ Բրուտյանը XVI-XVII դդ. սկսած թուրքական իշխանությունների գործադրած հալածանքներն ի ցույց դնելով հնագանդության կոչ անողներին՝ հիմնավորում է հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարը⁸⁰:

Սոկրատ խան Գելոֆյանցը 1910 թ. գրում էր, որ իթթիհատի վարած հետադիմական քաղաքականությունը ստիպում է հայ ժողովրդին լրջորեն խորհել ինքնապաշտպանության անհրաժեշտության մասին⁸¹:

Իսկ 1913 թ. «Հայ ինքնապաշտպանութեան առթիւ» խմբագրականում Սապահ-Գյուլյանը գրում է. «Մեր յեղափոխական պատմութիւնը որոշակի ցույց է տալիս, որ կոտորածներ տեղի չունեցան կամ եղածներն էլ շատ մեծ ծավալ չստացան այն վայրերում, ուր ժողովուրդը զինուած էր և կանգնել էր ինքնապաշտպանութեան գծի վրայ»: Նույնիսկ հայերից ավելի բարվոք դրության մեջ գտնվող մուսուլման ժողովուրդները շարունակ զինվում են ժամանակակից ու կատարելագործված զենքերով: Հոդվածագիրն ընդգծում է, որ նրանք կարող են իրենց ունեցվածքը վաճառել, նույնիսկ պարտքի տակ ընկնել, որպեսզի «զէնքի կողմից մի ուրիշից յետ չմնան»: Ինչ վերաբերում է հայերին, ապա, ըստ հոդվածագրի, «հայը դրամ է փոխ տալիս մուսուլմանին, բայց զենք չունի»: Սապահ-Գյուլյանը

⁷⁶ Նշանակում է «դավաճան ժողովուրդ»:

⁷⁷ «Երիտասարդ Հայաստան», 10. V. 1914:

⁷⁸ Նույն տեղում:

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ «Երիտասարդ Հայաստան», 17. VIII. 1910:

եղբակացնում է. «Խարբուսիկ հույսերով չտարվինք, տակավին շա՛տ փոթորիկների պիտի հանդիպինք: ... Հային ուզում են սպաննել, ցանկանո՞ւմ է նա ապրել – ուրեմն պետք է զինուի, պետք է ինքնապաշտպանութեան ամուր հիմքերի վրա կանգնի, ինչ գնով էլ որ լինի»⁸²:

«Անխուսափելի պայքարը» խմբագրականում վերլուծելով իթթիհատի անցած ուղին՝ պարբերականի խմբագիրն առաջ է քաշում այն միտքը՝ անխուսափելի է թուրք ազգայնականությունը մարմնավորող ուժի՝ իթթիհատի ու հայության բախումը, և որ հայերը պետք է պատրաստ լինեն դրան: «Եվրոպայից վտարվող և Ասիայի մէջ ամփոփող Թիւրքիայի ճակատագիրը դարձեալ «Խտթիհատն» է, որ վարել պիտի ուզի: Նա պիտի գործի ազգայնական փրփուրը բերանին, օրհասական սաստկութեամբ: Պայքարը իթթիհատի և հայութեան միջև լինելու է անողոք ու վճռական, – գրում է Սապահ-Գյուլյանը, – և այդ պայքարն է որոշելու հայութեան ճակատագիրը»⁸³: Նա կոչ է անում «օտար ափերում հաստատված հայ գաղութներին» չեզոք, կրավորական դիրք չըռնել, այլ բոլոր հնարավոր միջոցներով սատարել հայոց ինքնապաշտպանության գործին⁸⁴:

Ավաղ, «Երիտասարդ Հայաստանի» մոռայլ կանխատեսումները շուտով իրականացան: 1914 թ. սկսված Առաջին համաշխարհային պատերազմը երիտթուրքական կառավարությունը դիտեց ամենահարմար պահը՝ իրագործելու Հայկական հարցի լուծման իր ոճրագործ ծրագիրը:

Եզրակացություն

Այսպիսով, 1908–1914 թթ. Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության ԱՄՆ-ի օրգան «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթում տպագրված հոդվածների ու հաղորդումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պարբերականի ուշադրության կենտրոնում էին եվրոպական մեծ պետությունների քաղաքականության, միջազգային սոցիալ-դեմոկրատական շարժման, Պարսկաստանի սահմանադրական, Ռուսաստանի հեղափոխական շարժման, հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական դրության, հայ գաղթօջախների խնդիրներին ու միջկուսակցական հարաբերություններին վերաբերող հարցերը: Նկատելի է այն հանգամանքը, որ միջկուսակցական հարաբերությունների հարցերում պարբերականն աչքի է ընկնում իր հակագնակցական ուղղվածությամբ:

Արևմտահայության սոցիալ-տնտեսական ծանր դրությունն ի ցույց դնելուն մեկտեղ՝ պարբերականը հային իր հայրենիքում պահելու գաղափարի ջերմ կողմնակիցն ու քարոզիչն էր:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո հայության շրջանում առաջացած ոգեգործությունը կարճ ժամանակում իր տեղը զիջեց հիամաթափությանը: Արտահայտելով հնչակյան կուսակցության տեսակետը՝ պարբերականի հոդվածներում առաջ է քաշվում ազգային խնդիրների լուծման համար հույսը սեփական ուժերի վրա դնելու ու այս համատեքստում նաև ազգային-քա-

⁸² «Երիտասարդ Հայաստան», 27. V. 1913:

⁸³ «Երիտասարդ Հայաստան», 26. III. 1913:

⁸⁴ Նույն տեղում:

դաքական կուսակցությունների համախմբման գաղափարը։ Աչքի է զարնում այն, որ «Երիտասարդ Հայաստանի» ազգային-քաղաքական կյանքին վերաբերող հողվածներում կարմիր թելի պես անցնում է Արևմտյան Հայաստանի ինքնավարության ու արևմտահայության ինքնապաշտպանության նախապատրաստման գաղափարը։

«Երիտասարդ Հայաստան» պարբերականն իր մնայուն հետքն է թողել հայ ազատագրական շարժման, հասարակական-քաղաքական մտքի և հրապարակախոսության պատմության մեջ։

Գեղամ Հովհաննիսյան – պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի ավագ գիտաշխատող, ՀԱԱՀ հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս։ Գիտական հետաքրքրությունները՝ հայ ազգային կուսակցությունների և հասարակական-քաղաքական մտքի պատմություն։ Հեղինակ է 2 մենագրության և շուրջ 30 հոդվածի։ gegham.hovhannisian@mail.ru

REFERENCES

- “Azg” (Boston), 26. IX. 1908 (In Armenian).
 “Hnchak” (Pariz), 1907, № 9–10 (september-hoktember) (In Armenian).
 Sapah-Giulean Beruz. Kensagrutivn Stepan Sapah-Giuleani, Niv-York, 1936 (In Armenian).
 “Yeritasard Hayastan” (New-York), 01. I. 1908; 08. I. 1908; 15. I. 1908; 22. I. 1908; 29. I. 1908; 05. II. 1908; 19. II. 1908; 26. II. 1908; 04. III. 1908; 11. III. 1908; 18. III. 1908; 25. III. 1908; 01. IV. 1908; 15. IV. 1908; 29. IV. 1908; 06. V. 1908; 13. V. 1908; 20. V. 1908; 08. VII. 1908; 15. VII. 1908; 22. VII. 1908; 24. VII. 1908; 12. VIII. 1908; 19. VIII. 1908; 02. IX. 1908; 06. I. 1909; 28. IV. 1909; 05. V. 1909; 16. VI. 1909; 12. I. 1910; 19. I. 1910; 27. VII. 1910; 17. VIII. 1910; 31. VIII. 1910; 07. IX. 1910; 14. IX. 1910; 08. XII. 1910; 14. XII. 1910; 21. XII. 1910; 28. XII. 1910; 25. I. 1911; 19. II. 1911; 22. II. 1911; 01. III. 1911; 12. IV. 1911; 05. VII. 1911; 12. VII. 1911; 22. V. 1912; 10. VIII. 1912 (In Armenian).
 “Yeritasard Hayastan” (Providens), 26. III. 1913; 13. V. 1913; 27. V. 1913 (In Armenian).
 “Yeritasard Hayastan” (Pariz), batsarik, 10. V. 1914 (In Armenian).

АРМЯНСКИЕ НАЦИОНАЛЬНО-ПОЛИТИЧЕСКИЕ ЗАДАЧИ В ПЕРИОДИЧЕСКОМ ИЗДАНИИ «ЕРИТАСАРД АЙАСТАН» (1908–1914 гг.)

ГЕГАМ ОГАННИСЯН

Р е з ю м е

Ключевые слова: «Еритасард Айастан», Степан Сапах-Гюлян, западные армяне, Турция, тирания, освободительная борьба, социализм, революционное движение.

В начале XX века главной задачей армянской национально-политической жизни было освобождение западных армян от турецкого ига. На ее осуществление были направлены усилия армянских национальных партий. После младотурецкого переворота в 1908 г. и принятия конституции в Османской империи перед армянскими политическими силами встала новая задача – выбор путей дальнейших действий для защиты прав армянского народа. Политика младотурецкого правительства, а также многие вопросы армянской национально-политической жизни широко обсуждались на страницах периодического издания Социал-демократической партии Гничак «Еритасард Айастан» («Молодая Армения»), которое являлось главным партийным органом на территории США. Издание еженедельника началось в 1903 г. в Бостоне, затем он издавался в Нью-Йорке (1906–1912 гг.), в Провиденсе (1913, 1916–1917 гг.), в Париже (1914 г.), в Чикаго (1917–1923 гг.), в Бостоне (1923–1927 гг.), затем вновь в Нью-Йорке, до 1973 г. В газете освещались вопросы армянских колоний, межпартийных отношений, а также проблемы, касающиеся истории и деятельности партии Гничак. Широко обсуждался вопрос реформ, намеченных для проведения в армянских областях Турции. В статьях о национально-политической жизни, печатавшихся в «Еритасард Айастан», превалирует идея автономии Западной Армении и подготовки самообороны западных армян. Периодическое издание оставило неизгладимый след в истории армянского освободительного движения, общественно-политической мысли и общественного дискурса.

Гегам Оганнисян – к. и. н., доцент, старший научный сотрудник Института истории НАН РА, преподаватель кафедры общественных наук АНАУ. Научные интересы: история армянских национальных партий и общественно-политической мысли. Автор 2 монографий и около 30 статей. gegham.hovhannisyan@mail.ru

ARMENIAN NATIONAL-POLITICAL ISSUES IN
“YERITASARD HAYASTAN” PERIODICAL
(1908–1914)

GEGHAM HOVHANNISYAN

S u m m a r y

Key words: “Yeritasard Hayastan”, Stepan Sapah-Gulian, Western Armenians, Turkey, tyranny, liberation struggle, socialism, revolutionary movement.

The main issue of the Armenian national-political life in the early 20th century towards which the efforts of Armenian national parties were directed was the liberation of the Western Armenians from the Turkish yoke. After the

Young Turkish coup in 1908 and the adoption of the Constitution in the Ottoman Empire, the Armenian political forces faced a new task – choosing ways of further actions to protect the rights of the Armenian people. The policy of the Young Turkish government, as well as many issues of the Armenian national-political life, were widely discussed in the pages of “Yeritasard Hayastan” (“Young Armenia”) periodical of the Hnchak Social Democratic Party which was the main party organ in the United States. The weekly started to be published in Boston in 1903, then in 1907–1912 in New York, in 1913 in Providence, in 1914 in Paris in Chicago (1917–1923), in Boston (1923–1927) then again in New-York up to 1973. The newspaper covered issues of the Armenian colony, inter-party relations, as well as issues related to the history and activities of the Hnchak party. The issue of reforms planned for carrying out in the Armenian regions of Turkey was widely discussed. In “Yeritasard Hayastan” (Young Armenia) periodical the idea of autonomy of Western Armenia and the preparation of self-defense of Western Armenians prevails in articles on national-political life. The periodical left an indelible mark on the history of the Armenian liberation movement, socio-political thought and public discourse.

*Gegham Hovhannisyan – Candidate of Sciences in History, Senior Researcher at the Department of New History of the NAS RA Institute of History, lecturer at the Chair of Social Sciences of National Agrarian University of Armenia. Scientific interests: history of Armenian national parties and national-political thought. Author of 2 monographs and about three dozen articles.
gegham.hovhannisian@mail.ru*